## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 202-Ա

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 28-ՐԴ ՓՈՂՈՑ ԹԻՎ 9 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՐԱՉԻԿ ԻՎԱՆԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ, ՍՐԲՈՒՀԻ ՎՈԼՈԴՅԱՅԻ ԴԱՎԹՅԱՆԻՆ, ՍՈՆՅԱ ՀՐԱՉԻԿԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ ԵՎ ՄԱՐԻՆԵ ՀՐԱՉԻԿԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ ՀԱՄԱՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» 2008 թ. հունիսի 10-ի ՀՕ-117-Ն օրենքով և հիմք ընդունելով Հրաչիկ Մաթևոսյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել համասեփականատերեր Հրաչիկ Իվանի Մաթևոսյանի, Սրբուհի Վոլոդյայի Դավթյանի, Սոնյա Հրաչիկի Մաթևոսյանի և Մարինե Հրաչիկի Մաթևոսյանի սեփականության իրավունքը Արենի համայնքի Արենի բնակավայրի 28-րդ փողոց թիվ 9 հասցեում գտնվող բնակելի տան (1-ին հարկ՝ 91.7քմ., 2-րդ հարկ՝ 87.6 քմ, բաց պատշգամբ՝ 3.0քմ. և 6.4քմ.) և օժանդակ կառույցների (անասնագոմ՝ 21.1քմ, ծածկ՝ 25.9քմ և թոնրատուն՝ 14.3քմ) նկատմամբ:

2. Բնակելի տունը և Օժանդակ կառույցները կառուցվել են մինչև 2001 թվականը.

3. Անշարժ գույքը բավարարում է սույն օրենքի 1-ին և 2-րդ հոդվածներով նախատեսված պայմանները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 203-Ա

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Արենի համայնքի ավագանու 10.07.2022 թվականի թիվ 74-Ա, 15.03.2023 թվականի թիվ 019-Ա որոշումները և 2023թվականի օգոստոսի 23-ին Արենիի համայնքապետարանում կայացած աճուրդի թիվ 1-ից թիվ 4 արձանագրությունները, ***որոշում եմ՝***

1. Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.65624 հա (ծածկագիրը ՝ 10-008-0179-0018, հողատեսքը՝ 5-րդ կարգի վարելահող) գյուղատնտեսական նշանակության հողամասը 600 000 ՀՀ դրամով օտարել աճուրդում հաղթող ճանաչված Արևիկ Արտաշեսի Կարապետյանին:

2. Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.4843 հա (ծածկագիրը ՝ 10-008-0265-0100, հողատեսքը՝ 5-րդ կարգի վարելահող) գյուղատնտեսական նշանակության հողամասը 168 000 ՀՀ դրամով օտարել աճուրդում հաղթող ճանաչված Արտյոմ Աշոտի Ծատուրյանին:

3. Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.17344 հա (ծածկագիրը ՝ 10-008-0265-0101, հողատեսքը՝ 5-րդ կարգի վարելահող) գյուղատնտեսական նշանակության հողամասը 72 000 ՀՀ դրամով օտարել աճուրդում հաղթող ճանաչված Արտյոմ Աշոտի Ծատուրյանին:

4. Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.22268 հա (ծածկագիրը՝ 10-006-0343-0016, հողատեսքը ՝ 5-րդ կարգի վարելահող) գյուղատնտեսական նշանակության հողամասը 120 000 ՀՀ դրամով օտարել աճուրդում հաղթող ճանաչված Արսեն Դերենիկի Շահինյանին:

5. Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.23255 հա (ծածկագիրը ՝ 10-006-0315-0068, հողատեսքը՝ 5-րդ կարգի վարելահող) գյուղատնտեսական նշանակության հողամասը 240 000 ՀՀ դրամով օտարել աճուրդում հաղթող ճանաչված Արսեն Դերենիկի Շահինյանին:

6. Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.37607 հա (ծածկագիրը ՝ 10-006-0297-0025, հողատեսքը՝ 5-րդ կարգի վարելահող) գյուղատնտեսական նշանակության հողամասը 360 000 ՀՀ դրամով օտարել աճուրդում հաղթող ճանաչված Արսեն Դերենիկի Շահինյանին:

7. Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.48382 հա (ծածկագիրը ՝ 10-006-0283-0046, հողատեսքը՝ 3-րդ կարգի անջրդի վարելահող) գյուղատնտեսական նշանակության հողամասը 480 000 ՀՀ դրամով օտարել աճուրդում հաղթող ճանաչված Սարգիս Հենրիկի Պողոսյանին:

8. Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.30074 հա (ծածկագիրը ՝ 10-006-0251-0036, հողատեսքը՝ 5-րդ կարգի վարելահող) գյուղատնտեսական նշանակության հողամասը 300 000 ՀՀ դրամով օտարել աճուրդում հաղթող ճանաչված Սարգիս Հենրիկի Պողոսյանին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 204-Ա

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՌԻՆԴ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՄԱՆՎԵԼ ԺՈՐԺԻԿԻ ՉԱՔԱՐՅԱՆԻ ԵՎ ԺԻՐԱՅՐ ԺՈՐԺԻԿԻ ՉԱՔԱՐՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՓԱՍՏԱՑԻ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 0,1710հա ԵՎ 0.03365 ՀԱ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՃԱՆԱՉՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (ՀՕ-510-Ն, 26.12.2002թ.) 7-րդ հոդվածի պահանջներով, Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է՝***

Ճանաչել Արենի համայնքի Ռինդ բնակավայրի վարչական տարածքում գտնվող, Մանվել Ժորժիկի Չաքարյանի և Ժիրայր Ժորժիկի Չաքարյանի կողմից փաստացի ավել օգտագործվող 0,1710հա (ծածկագիրը՝ 10-037-0118-0009) և 0.03365հա (ծածկագիրը՝ 10-037-0116-0089) գյուղատնտեսական նշանակության հողամասերի սեփականության իրավունքը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

04 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 205-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՌԻՆԴ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 13.69253 ՀԱ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, «Հողային օրենսգրքի» 76-րդ հոդվածի պահանջներով, և հիմք ընդունելով՝ Արենի համայնքի ավագանու 10.07.2023թվականի թիվ 73-Ա որոշումը, Արենի համայնքի մրցութային հանձնաժողովի 23.08.2023 թվականի թիվ 1 արձանագրությունը, ՀՀ Վայոց ձորի մարզպետի 18.11.2021թվականի թիվ 01/15.1/7435-2021 գրությունը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության սեփականություն հանդիսացող, Ռինդ բնակավայրի վարչական տարածքում գտնվող 13.69253 հա (ծածկագիրը՝ 10-037-0277-0002, հողատեսքը՝ արոտավայր) գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասը 10 տարի ժամկետով, վարձակալությամբ հատկացնել մրցույթում հաղթող ճանաչված <<Բեզոար>> բնապահպանական հիմնադրամին, ի դեմս տնօրեն Հարություն Մուրադի Հարությունյանին:

- Հողամասի կադաստրային արժեքը կազմում է՝ 924 246 ՀՀ դրամ,
- Տարեկան վարձավճարը սահմանել 135 000 ՀՀ դրամ, որը կազմում է հողամասի հողի հարկի տարեկան դրույքաչափի 2434.6%-ը: Պայմանագրի կնքման պահին 13.6925հա գյուղատնտեսական նշանակության արոտավայրի՛ հողի հարկի տարեկա́ն դրույքաչափը կազմում է 5 545 ՀՀ դրամ,
- Յուրաքանչյուր ամսվա վարձավճարը կազմում է 11 250 ՀՀ դրամ:
- Վարձավճարը վարձակալի կողմից մուծվում է հավասար չափերով՝ ըստ տարվա օրացուցային եռամսյակների, ոչ ուշ քան մինչև համապատասխան եռամսյակի վերջին ամսվա 20-ը:

- Առաջին վարձակալական վճարումը կատարվում է ոչ ուշ, քան պայմանագրի ուժի մեջ մտնելուց 10 օրվա ընթացքում:
- Վերջին վարձակալական վճարումը կատարվում է ոչ ուշ, քան մինչև պայմանագրի գործողության ժամկետի վերջին ամսվա 25-ը:
- 2. սույն որոշման 1-ին կետում նշված հողամասը վարձակալությամբ հատկացվում է Արենի համայնքում վայրի բնության, կենդանական աշխարհի և բուսականության պահպանման ծրագրեր իրականացնելու նպատակով:

**2.** <<Բեզոար>> բնապահպանական հիմնադրամը իրավունք չունի խոչընդոտելու համայնքի բնակիչների մուտքը արոտավայրեր՝ անասունների արածեցման, խոտհնձի, օրենքով չարգելված կենդանիների և թռչունների որսի և խոտաբույսերի հավաքման նպատակով:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 206-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՌԻՆԴ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 213.46966 ՀԱ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, «Հողային օրենսգրքի» 76-րդ հոդվածի պահանջներով, և հիմք ընդունելով՝ Արենի համայնքի ավագանու 10.07.2023թվականի թիվ 73-Ա որոշումը, Արենի համայնքի մրցութային հանձնաժողովի 23.08.2023 թվականի թիվ 2 արձանագրությունը, ՀՀ Վայոց ձորի մարզպետի 18.11.2021թվականի թիվ 01/15.1/7435-2021 գրությունը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության սեփականություն հանդիսացող, Ռինդ բնակավայրի վարչական տարածքում գտնվող 213.46966 հա (ծածկագիրը՝ 10-037-0278-0002, հողատեսքը՝ արոտավայր) գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասը 10 տարի ժամկետով, վարձակալությամբ հատկացնել մրցույթում հաղթող ճանաչված <<Բեզոար>> բնապահպանական հիմնադրամին, ի դեմս տնօրեն Հարություն Մուրադի Հարությունյանին:

- Հողամասի կադաստրային արժեքը կազմում է՝ 14 409 202 ՀՀ դրամ,
- Տարեկան վարձավճարը սահմանել 1 250 000 ՀՀ դրամ, որը կազմում է հողամասի հողի հարկի տարեկան դրույքաչափի 1445.8%-ը: Պայմանագրի կնքման պահին 213.46966հա գյուղատնտեսական նշանակության արոտավայրի հողի հարկի տարեկան դրույքաչափը կազմում է 86 455 ՀՀ դրամ,
- Յուրաքանչյուր ամսվա վարձավճարը կազմում է 104 167 ՀՀ դրամ:
- Վարձավճարը վարձակալի կողմից մուծվում է հավասար չափերով՝ ըստ տարվա օրացուցային եռամսյակների, ոչ ուշ քան մինչև համապատասխան եռամսյակի վերջին ամսվա 20-ը:
- Առաջին վարձակալական վճարումը կատարվում է ոչ ուշ, քան պայմանագրի ուժի մեջ մտնելուց 10 օրվա ընթացքում:

- Վերջին վարձակալական վճարումը կատարվում է ոչ ուշ, քան մինչև պայմանագրի գործողության ժամկետի վերջին ամսվա 25-ը:
- 2. սույն որոշման 1-ին կետում նշված հողամասը   վարձակալությամբ հատկացվում է Արենի համայնքում վայրի բնության, կենդանական աշխարհի և բուսականության պահպանման ծրագրեր իրականացնելու նպատակով:

**2.** <<Բեզոար>>  բնապահպանական հիմնադրամը իրավունք չունի  խոչընդոտելու համայնքի բնակիչների մուտքը արոտավայրեր՝ անասունների արածեցման, խոտհնձի, օրենքով չարգելված կենդանիների և թռչունների որսի և խոտաբույսերի հավաքման նպատակով

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 207-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԵԼՓԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 131.20476 ՀԱ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, «Հողային օրենսգրքի» 76-րդ հոդվածի պահանջներով, և հիմք ընդունելով՝ Արենի համայնքի ավագանու 10.07.2023թվականի թիվ 73-Ա որոշումը, Արենի համայնքի մրցութային հանձնաժողովի 23.08.2023 թվականի թիվ 3 արձանագրությունը, ՀՀ Վայոց ձորի մարզպետի 18.11.2021թվականի թիվ 01/15.1/7435-2021 գրությունը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության սեփականություն հանդիսացող, ելփին բնակավայրի վարչական տարածքում գտնվող 131.20476 հա (ծածկագիրը՝ 10-020-0109-0173, հողատեսքը՝ արոտավայր) գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասը 10 տարի ժամկետով, վարձակալությամբ հատկացնել մրցույթում հաղթող ճանաչված <<Բեգոար>> բնապահպանական հիմնադրամին, ի դեմս տնօրեն Հարություն Մուրադի Հարությունյանին:

- Հողամասի կադաստրային արժեքը կազմում է՝ 61 010 213 ՀՀ դրամ,
- Տարեկան վարձավճարը սահմանել 780 000 ՀՀ դրամ, որը կազմում է հողամասի հողի հարկի տարեկան դրույքաչափի 213%-ը: Պայմանագրի կնքման պահին 131.20476հա գյուղատնտեսական նշանակության արոտավայրի հողի հարկի տարեկան դրույքաչափը կազմում է 366 061 ՀՀ դրամ,
- Յուրաքանչյուր ամսվա վարձավճարը կազմում է 65 000 ՀՀ դրամ:
- Վարձավճարը վարձակալի կողմից մուծվում է հավասար չափերով՝ ըստ տարվա օրացուցային եռամսյակների, ոչ ուշ քան մինչև համապատասխան եռամսյակի վերջին ամսվա 20-ը:
- Առաջին վարձակալական վճարումը կատարվում է ոչ ուշ, քան պայմանագրի ուժի մեջ մտնելուց 10 օրվա ընթացքում:

- Վերջին վարձակալական վճարումը կատարվում է ոչ ուշ, քան մինչև պայմանագրի գործողության ժամկետի վերջին ամսվա 25-ը:
- 2. սույն որոշման 1-ին կետում նշված հողամասը վարձակալությամբ հատկացվում է Արենի համայնքում վայրի բնության, կենդանական աշխարհի և բուսականության պահպանման ծրագրեր իրականացնելու նպատակով:

**2.** <<Բեզոար>> բնապահպանական հիմնադրամը իրավունք չունի խոչընդոտելու համայնքի բնակիչների մուտքը արոտավայրեր՝ անասունների արածեցման, խոտհնձի, օրենքով չարգելված կենդանիների և թռչունների որսի և խոտաբույսերի հավաքման նպատակով

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 208-Ա

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ 10-Ը ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻՆ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ԹԻՎ 29 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 9-րդ և 124-րդ կետերը և ՀՀ Կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2091 որոշումը՝ ***որոշում եմ՝***

1. Արենի համայնքի ղեկավարի կողմից 10-ը սեպտեմբերի 2021 թվականին կառուցապատող Աշոտ Մինասյանին տրամադրված <<Չիվա բնակավայրում բնակելի տան կառուցում, 1 հարկ՝ կիսանկուղային հարկով 11.6x12.12մ արտաքին չափերով, կադ. ծածկագիր 10-036-0006-0003>> օբյեկտի շինարարության թույլտվության ժամկետը երկարաձգել 24 ամիս ժամկետով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 209-Ա

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԸ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 3-րդ հոդվածը, ՀՀ Կառավարության 17.09.2009թ. N1066-Ն որոշումը ***որոշում եմ՝***

1. Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 0.07869հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-008-0112-0094, հողատեսքը՝ վարելահող) ցածրարժեք հողատեսքը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ կորիզավոր պտղատու այգի:

1) Վերը նշված գյուղատնտեսական նշանակության հողամասը գրանցել որպես առանձին միավոր համայնքային սեփականություն:

2. Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 0.13699հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-008-0112-0095, հողատեսքը՝ վարելահող) ցածրարժեք հողատեսքը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ կորիզավոր պտղատու այգի:

1) Վերը նշված գյուղատնտեսական նշանակության հողամասը գրանցել որպես առանձին միավոր համայնքային սեփականություն:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 210-Ա

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՂՓԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԱՀԱՐՈՆ ՀԱՅԿԱԶԻ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՓԱՍՏԱՑԻ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 0,00709 ՀԱ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՃԱՆԱՉՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (ՀՕ-510-Ն, 26.12.2002թ.) 7-րդ հոդվածի պահանջներով՝ Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է՝***

Ճանաչել Արենի համայնքի Եղփին բնակավայրի վարչական տարածքում գտնվող, Ահարոն Հայկազի Միքայելյանի կողմից փաստացի ավել օգտագործվող 0,00709հա (ծածկագիրը՝ 10-020-0139-0008) գյուղատնտեսական նշանակության հողամասի սեփականության իրավունքը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 211-Ա

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԸ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 3-րդ հոդվածը, ՀՀ Կառավարության 17.09.2009թ. N1066-Ն որոշումը՝ ***որոշում եմ՝***

1. Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն հանդիսացող 0.45619հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-006-0352-, հողատեսքը՝ այլ) ցածրարժեք հողատեսքը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ խոտհարքի:

1) Վերը նշված գյուղատնտեսական նշանակության հողամասը գրանցել որպես առանձին միավոր համայնքային սեփականություն:

2. Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն հանդիսացող 0.35238հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-006-0352-, հողատեսքը՝ այլ) ցածրարժեք հողատեսքը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ խոտհարքի:

1) Վերը նշված գյուղատնտեսական նշանակության հողամասը գրանցել որպես առանձին միավոր համայնքային սեփականություն:

3. Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 0.17659հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-006-0335-, հողատեսքը՝ այլ) ցածրարժեք հողատեսքը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ վարելահողի:

1) Վերը նշված գյուղատնտեսական նշանակության հողամասը գրանցել որպես առանձին միավոր համայնքային սեփականություն:

4. Արենի համայնքի Ագարակաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 0.04153հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-004-0310-, հողատեսքը՝ այլ) ցածրարժեք հողատեսքը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ վարելահողի:

1) Վերը նշված գյուղատնտեսական նշանակության հողամասը գրանցել որպես առանձին միավոր համայնքային սեփականություն:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 212-Ա

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 3-րդ հոդվածի պահանջներով՝ ***որոշում եմ.***

1. Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող, 0,37664 հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-008-0184-0061, հողատեսքը՝ այլ) հողամասը գրանցել որպես առանձին միավոր՝ համայնքային սեփականություն:

2. Արենի համայնքի Արփի բնակավայրի վարչական տարածքում գտնվող, 0,12008 հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-012-0154-, հողատեսքը՝ այլ) հողամասը գրանցել որպես առանձին միավոր՝ համայնքային սեփականություն:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 213-Ա

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԱՎՆԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ԳՐԱՆՑԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 3-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 29.12.2005 թվականի թիվ 2387-Ն, որոշումները՝ Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է՝.***

1. Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող 0,22736 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության հողամասը (ծածկագիրը՝ 10-006-0352-, գործառնական նշանակությունը՝ գյուղ. արտադրական) գրանցել որպես առանձին միավորներ՝ պետական սեփականություն:

1.2. Վերոնշյալ հողամասին տրամադրել հետևյալ հասցեն՝ ՀՀ Վայոց ձորի մարզ, Արենի համայնք, գ. Աղավնաձոր, 20 հողամաս:

2. Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող 0,22469 հա բնակավայրերի նպատակային նշանակության հողամասը (ծածկագիրը՝ 10-006-0105-, գործառնական նշանակությունը՝ այլ) գրանցել որպես առանձին միավորներ՝ համայնքային սեփականություն:

2.2. Վերոնշյալ հողամասին տրամադրել հետևյալ հասցեն՝ ՀՀ Վայոց ձորի մարզ, Արենի համայնք, գ. Աղավնաձոր, 30 հողամաս:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 214-Ա

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԱՎՆԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԱԼԻՍԱ ՍԵՐՅՈԺԱՅԻ ԲԱՐՍԵՂՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԸ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 3-րդ հոդվածը, ՀՀ Կառավարության 17.09.2009թ. N1066-Ն որոշումը և քաղաքացու դիմումը՝ ***որոշում եմ՝***

1. Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող, Ալիսա Սերյոժայի Բարսեղյանի սեփականություն հանդիսացող 1.866հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-006-0329-0016, հողատեսքը՝ խոտհարք) ցածրարժեք հողատեսքը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ խաղողի այգի:

2. Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող, Ալիսա Սերյոժայի Բարսեղյանի սեփականություն հանդիսացող 3.03113հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-006-0329-0015, հողատեսքը՝ խոտհարք) ցածրարժեք հողատեսքը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ խաղողի այգի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 215-Ա

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԱՎՆԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0.33239ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՋՐԱՅԻՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԱՌԿԱ 2616.5ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ԳՐԱՆՑԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի պահանջով և հիմք ընդունելով, ՀՀ Հողային օրենսգրգի 3-րդ հոդվածը, ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ մասը, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. N 2387-Ն որոշումը՝ ***որոշում եմ՝***

1. Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող, 0.33239հա մակերեսով ջրային նպատակային նշանակության հողամասում առկա 2616.5քմ մակերեսով ջրամբարը ճանաչել օրինական և գրանցել որպես առանձին միավոր՝ համայնքային սեփականություն,
2. Ինքնակամ կառույցը օրենքով սահմանված կարգով հաշվառված է ՀՀ կադաստրի կոմիտեում: Հաշվառման կոդ՝ 2023BHVRSJ:
3. Վերը նշված 0.33239հա ջրային նշանակության հողամասին և շինությանը տալ հետևյալ հասցեն՝ ՀՀ ՎՁՄ Արենի գյուղ Աղավնաձոր, 1-ին փողոց, 122 ջրավազան:
4. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերը նշված կառույցն իրականացրած անձն անհայտ է և կառուցը որևէ անձի կողմից չի շահագործվում, կառույցը և առանձնացված 0.33239հա մակերեսով Ջրային նպատակային նշանակության հողամասը (ծածկագիրը՝ 10-006-0282-0003, գործառնական նշանակությունը՝ ջրային) տնօրինել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 18.05.2006թվականի 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 43.1 կետը,
5. Ինքնակամ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները՝ և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն

ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ինչպես նաև չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա,

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 216-Ա

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԽԱՉԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 12-ՐԴ ՓՈՂՈՑ 1 ՆՐԲ. ԹԻՎ 4 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ մասը, 16.12.2021թ.-ի Հայաստանի Հանրապետության ՀՕ 397-Ն օրենքի 2-րդ հոդվածը, ՀՀ կառավարության 05.01.2022թվականի թիվ 14-Ն որոշումը և քաղաքացու դիմումը, ***որոշում եմ՝***

1. Արենի համայնքի Խաչիկ բնակավայրի 12-րդ փողոց, 1 նրբ., թիվ 4 հասցեում գտնվող (ծածկագիր՝ 10-025-0038-0012, հողամասի չափը՝ 0.15165 հա, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) Նորիկ Ռուբենի Ասատրյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասի վրա ինքնակամ կառուցված կիսակառույց բնակելի տունը՝ 100.8քմ. ճանաչել օրինական:
2. Ինքնակամ կառույցը օրենքով սահմանված կարգով հաշվառված է ՀՀ կադաստրի կոմիտեի էլեկտրոնային բազայում: Հաշվառման կոդ՝ 2023MXA8LZ:
3. Առաջարկել կառույցն իրականացրած Նորիկ Ասատրյանին վճարելու 1 քմ.՝ 456 ՀՀ դրամ ինքնակամ կառուցված կիսակառույց բնակելի տան համար՝ ընդամենը 45965 ՀՀ դրամ (քառասունհինգ հազար ինը հարյուր վաթսունհինգ) ՀՀ դրամ, հաշվի առնելով «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (ՀՕ-225-Ն) 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ և 5-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետերով սահմանված շինության տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցը և 2020 թվականի հունիսի 4-ի N 1023-Ն որոշմամբ սահմանված տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության սահմանները:
4. Կառուցապատող Նորիկ Ասատրյանին սահմանված կարգով տրամադրել նախագծման թույլտվություն, որի հերթական համարն է 32:

5. Ինքնակամ կառույցների օրինականացման վճարները վճարվում են անկանխիկ եղանակով հետևյալ հաշվեհամարին՝ 900355105082:
6. Ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ինչպես նաև չեն գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա,
7. Սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում ինքնակամ կառույցն իրականացրած ընկերության կողմից սահմանված գումարը չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:
8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 217-Ա

### ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻ ԼՈՒՍԻՆԵ ՍԱՀԱԿՅԱՆԻ ՄԻՋԵՎ ԿՆՔՎԱԾ 0.08 ՀԱ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքի» 466-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 101-րդ հոդվածի 4-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Լուսինե Սահակյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

Լուծել 08 հունիսի 2004 թվականին ՀՀ Վայոց ձորի մարզի Արենի համայնքի ղեկավարի և քաղաքացի Լուսինե Սահակյանի միջև կնքված Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող 0.08հա մակերեսով (նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, հողատեսքը՝ վարելահող) Անշարժ գույքի վարձակալության պայմանագիրը (վկայական 0055430):

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 218-Ա

## ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻ ԼԵՎԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ ՄԻՋԵՎ ԿՆՔՎԱԾ 0.13 ՀԱ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքի» 466-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 101-րդ հոդվածի 4-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Լևիկ Մաթևոսյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

Լուծել 27 մայիսի 2004 թվականին ՀՀ Վայոց ձորի մարզի Արենի համայնքի ղեկավարի և քաղաքացի Լևիկ Մաթևոսյանի միջև կնքված Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող 0.13 հա մակերեսով (նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, հողատեսքը՝ վարելահող) Անշարժ գույքի վարձակալության պայմանագիրը (վկայական 0055469):

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 219-Ա

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՐԱՄ ՄԵՐԳԵՎՈՍԻ ՂԱՐԱԽԱՆՅԱՆԻ ԵՎ ՄԵՏԱՔՍՅԱ ՄԵՐԳԵՎՈՍԻ ՂԱՐԱԽԱՆՅԱՆԻ ՀԱՄԱՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԸ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 3-րդ հոդվածը, ՀՀ Կառավարության 17.09.2009թ. N1066-Ն որոշումը, քաղաքացու դիմումը ***որոշում եմ՝***

Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող Արամ Մերգևոսի Ղարախանյանի և Մետաքսյա Մերգևոսի Ղարախանյանի համասեփականություն հանդիսացող 0.167հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-008-0109-0002, հողատեսքը՝ վարելահող) ցածրարժեք հողատեսքը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ խաղողի այգի:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

13 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 220-Ա

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՔԱՋԻԿ ՄԵՐՈՒԺԱՆԻ ԱՎԱԳՅԱՆԻՆ ՀԱՄԱՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԸ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 3-րդ հոդվածը, ՀՀ Կառավարության 17.09.2009թ. N1066-Ն որոշումը և քաղաքացու դիմումը՝ ***որոշում եմ՝***

Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող Քաջիկ Մերուժանի Ավագյանին, Աննա Բենիկի Լևոնյանին, Սամվել Քաջիկի Ավագյանին, Արտյոմ Քաջիկի Ավագյանին և Ժաննա Քաջիկի Ավագյանին համասեփականության իրավունքով պատկանող 0.24հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-008-0146-0011, հողատեսքը՝ վարելահող) ցածրարժեք հողատեսքը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ խաղողի այգի:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

13 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 221-Ա

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՐՏՅՈՄ ՔԱՋԻԿԻ ԱՎԱԳՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԸ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 3-րդ հոդվածը, ՀՀ Կառավարության 17.09.2009թ. N1066-Ն որոշումը, քաղաքացու դիմումը ***որոշում եմ՝***

Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող Արտյոմ Քաջիկի Ավագյանին սեփականության իրավունքով պատկանող 0.257հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-008-0146-0010, հողատեսքը՝ վարելահող) ցածրարժեք հողատեսքը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ խաղողի այգի:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 222-Ա

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԱՎՆԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԼԵՎՈՆ ԱՐԱՄԻ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԸ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 3-րդ հոդվածը, ՀՀ Կառավարության 17.09.2009թ. N1066-Ն որոշումը և քաղաքացու դիմումը՝ ***որոշում եմ՝***

Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող Լևոն Արամի Միքայելյանին սեփականության իրավունքով պատկանող 0.375հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-006-0289-0032, հողատեսքը՝ վարելահող) ցածրարժեք հողատեսքը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ խաղողի այգի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 223-Ա

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 13 ՀՈՒԼԻՍԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 170-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջով՝ ***որոշում եմ.***

Արենի համայնքի ղեկավարի 13 հուլիսի 2023 թվականի «Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող, Ավետիք Ռուբենի Գասպարյանին, Ցողիկ Թևոսի Գևորգյանին և Աննա Ավետիքի Գասպարյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող գյուղատնտեսական նշանակության 0.147 հա ցածրարժեք հողատեսքը ավելի բարձրարժեք հողատեսքի փոխադրելու մասին» թիվ 170-Ա որոշման բովանդակության մեջ 0.144 թիվը փոխարինել 0.147 թվով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 224-Ա

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ 18-Ը ՄԱՐՏԻ 2022 ԹՎԱԿԱՆԻՆ ՏՐՎԱԾ ԹԻՎ 24 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ 30.03.2022ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 07 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 9-րդ և 124-րդ կետերը՝ ***որոշում եմ՝***

1. Արենի համայնքի ղեկավարի կողմից կառուցապատող Լևոն Գրիգորյանին 18 մարտի 2022 թվականին տրամադրված թիվ 24 նախագծման թույլտվության առաջին մասի մեջ կատարել փոփոխություններ. «3780 թիվը փոխարինել «4070.37» թվով,

2. Արենի համայնքի ղեկավարի կողմից կառուցապատող Լևոն Գրիգորյանին 30 մարտի 2022 թվականին տրամադրված թիվ 07 շինարարության թույլտվության առաջին մասի մեջ կատարել փոփոխություններ. «4012 թիվը փոխաբինել «4070.37» թվով,

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 225-Ա

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՅՈՒՐԻԿ ՍԵՐՅՈԺԱՅԻ ԱՎԱԳՅԱՆԻՆ ՀԱՄԱ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0.167ՀԱ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԸ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 3-րդ հոդվածը, ՀՀ Կառավարության 17.09.2009թ. N1066-Ն որոշումը, քաղաքացու դիմումը՝ ***որոշում եմ՝***

Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող Յուրիկ Սերյոժայի Ավագյանին, Լավուրիկ Միցխարի Մաթևոսյանին, Էլվիրա Յուրիկի Ավագյանին և Համիկ Յուրիկի Ավագյանին համասեփականության իրավունքով պատկանող 0.167հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-008-0110-0004, հողատեսքը՝ վարելահող) ցածրարժեք հողատեսքը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ խաղողի այգի:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 226-Ա

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի պահանջով և հիմք ընդունելով Արենի համայնքի ավագանու 12.09.2023թվականի թիվ 104-Ա որոշումը՝ Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է.***

1. Արենի համայնքի 2023 թվականի տարեկան բյուջեի 4729՝ այլ նպաստներ բյուջեի հոդվածի գումարներից, Արենի համայնքի ներքոնշյալ ընտանիքներին հատկացնել միանվագ դրամական օգնություն՝

| Հ/Հ | ԱԶԳԱՆՈՒՆ, ԱՆՈՒՆ, ՀԱՅՐԱՆՈՒՆ | ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ (ՀԱԶԱՐ ՀՀ ԴՐԱՄ) | ԲՆԱԿԱՎԱՅՐ | ԱՆՁՆԱԳՐԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ, ՀԱՇՎԵՀԱՄԱՐ |
|---|---|---|---|---|
| 1. | Գալստյան Ռուբեն Վանոյի | 30 | Ագարակաձոր | AR0555724 |
| 2. | Նավասարդյան Տիգրան Դերենիկի | 50 | Ագարակաձոր | 010683795 |
| 3. | Բայաթյան Մանուկ Ռազմիկի | 20 | Ագարակաձոր | 012574455 |
| 4. | Օհանյան Շուշիկ Սիրեկանի | 30 | Աղավնաձոր | AU0204580 |
| 5. | Մոսիսյան Նահապետ Հունանի | 50 | Արփի | 013970272 |
| 6. | Վարդանյան Աստղիկ Արշալույսի | 30 | Արփի | 001822386 |
| 7. | Առաքելյան Վահրամ Քոչարի | 30 | Արենի | AS0476295 |
| 8. | Առաքելյան Ստեփան Գերասիմի | 20 | Ելփին | 001822253 |
| 9. | Վարդանյան Արմինե Վարդանի | 30 | Ռինդ | 012571063 |
| 10. | Թադևոսյան Անահիտ Արմենակի | 30 | Ռինդ | 008889446 |
| 11. | Ավագյան Մարիա Նորայրի | 100 | Չիվա | 005551486 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 420 | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 227-Ա

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 28-ՐԴ ՓՈՂՈՑ . ԹԻՎ 17 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ մասը, 16.12.2021թ.-ի Հայաստանի Հանրապետության ՀՕ 397-Ն օրենքի 2-րդ հոդվածը, ՀՀ կառավարության 05.01.2022թվականի թիվ 14-Ն որոշումը և քաղաքացու դիմումը, ***որոշում եմ՝***

1. Արենի համայնքի Արենի բնակավայրի 28-րդ փողոց, թիվ 17 հասցեում գտնվող (ծածկագիր՝ 10-008-0013-0003, հողամասի չափը՝ 0.085 հա, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) Սիրանուշ Արամայիսի Մանուկյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասի վրա ինքնակամ կառուցված բնակելի տունը՝ 204.01քմ. (բնակելի տուն՝ կիսանկուղ 32.3քմ., բնակելի տուն՝ 1-ին հարկ 87.83քմ., աստիճանավանդակ՝ 5.2քմ., բնակելի տուն՝ 2-րդ հարկ՝ 78.68քմ.) և օժանդակ կառույցները՝ 20.05քմ. (ծածկ՝ 13.92քմ., հավաբուն՝ 4.88քմ, սանհանգույց՝ 1.25քմ) ճանաչել օրինական:
2. Ինքնակամ կառույցը օրենքով սահմանված կարգով հաշվառված է ՀՀ կադաստրի կոմիտեի էլեկտրոնային բազայում: Հաշվառման կոդ՝ 2022JJZAQA:
3. Առաջարկել կառույցն իրականացրած Սիրանուշ Մանուկյանին վճարելու 1 քմ.՝ 1209 ՀՀ դրամ ինքնակամ կառուցված բնակելի տան համար՝ ընդամենը 246 648 (երկու հարյուր քառասունվեց հազար վեց հարյուր քառասունութ) ՀՀ դրամ և 1քմ՝ 725.4 ՀՀ դրամ ինքնակամ կառուցված օժանդակ կառույցների համար՝ ընդամենը 14 545 (տասնչորս հազար հինգ հարյուր քառասունհինգ) ՀՀ դրամ, ընդամենը՝ 261 193 ՀՀ դրամ, հաշվի առնելով «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (ՀՕ-225-Ն) 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ և 5-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետերով սահմանված շինության տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցը և 2020

թվականի հունիսի 4-ի N 1023-Ն որոշմամբ սահմանված տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության սահմանները:

4. Ինքնակամ կառույցների օրինականացման վճարները վճարվում են անկանխիկ եղանակով հետևյալ հաշվեհամարին՝ 900355105082:
5. Ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ինչպես նաև չեն գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա,
6. Սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում ինքնակամ կառույցն իրականացրած անձի կողմից սահմանված գումարը չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 228-Ա

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՐԱՅԻԿ ԱՐԱՄԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0.51841ՀԱ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԸ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 3-րդ հոդվածը, ՀՀ Կառավարության 17.09.2009թ. N1066-Ն որոշումը, քաղաքացու դիմումը՝ ***որոշում եմ՝***

Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող Արայիկ Արամի Սարգսյանին սեփականության իրավունքով պատկանող 0.51841հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-008-0154-0087, հողատեսքը՝ վարելահող) ցածրարժեք հողատեսքը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ խաղողի այգի:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 229-Ա

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՍԱՄՎԵԼ ՎԱՆՈՒՇԻ ՂԱՐԱԽԱՆՅԱՆԻՆ ՀԱՄԱՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0.215ՀԱ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԸ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 3-րդ հոդվածը, ՀՀ Կառավարության 17.09.2009թ. N1066-Ն որոշումը, քաղաքացու դիմումը՝ ***որոշում եմ՝***

Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող Սամվել Վանուշի Ղարախանյանին, Լիդա Խաչիկի Վարդանյանին, Գագիկ Սամվելի Ղարախանյանին և Հասմիկ Սամվելի Ղարախանյանին համասեփականության իրավունքով պատկանող 0.215հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-008-0250-0001, հողատեսքը՝ վարելահող) ցածրարժեք հողատեսքը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ խաղողի այգի:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 230-Ա

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՍԱՄՎԵԼ ՎԱՆՈՒՇԻ ՂԱՐԱԽԱՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0.123ՀԱ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԸ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 3-րդ հոդվածը, ՀՀ Կառավարության 17.09.2009թ. N1066-Ն որոշումը, քաղաքացու դիմումը՝ ***որոշում եմ՝***

Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող Սամվել Վանուշի Ղարախանյանին սեփականության իրավունքով պատկանող 0.123հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-008-0209-0024, հողատեսքը՝ վարելահող) ցածրարժեք հողատեսքը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ խաղողի այգի:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 231-Ա

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՐԴԱՆ ԼԵՎՈՆԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ ՀԱՄԱՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0,144ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՌԱՋԱՑԱԾ 0,07176ՀԱ ԵՎ 0.07224ՀԱ ՄԱԿԵՐԵՍՆԵՐՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՆ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 29.12.2005թ. N 2387-Ն որոշումը, ***որոշում եմ.***

Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող, Վարդան Լևոնի Համբարձումյանի, Լևոն Վարանցովի Համբարձումյանի, Աստղիկ Սուրենի Համբարձումյանի և Վարանցով Լևոնի Համբարձումյանի համասեփականություն հանդիսացող 0.144հա (ծածկագիրը՝ 10-008-0036-0008, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) բնակավայրերի նպատակային նշանակության հողամասի բաժանման ընթացքում առաջացած.

ա) 0.07176հա բնակավայրերի նշանակության հողամասին տալ հետևյալ հասցեն՝ ՀՀ Վայոց ձորի մարզ, Արենի գյուղ Արենի 18 փողոց, 12 բնակելի տուն,

բ) 0,07224հա բնակավայրերի նշանակության հողամասին տալ հետևյալ հասցեն՝ ՀՀ Վայոց ձորի մարզ, Արենի գյուղ Արենի 18 փողոց, 12/1, հողամաս:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 232-Ա

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՂԱՎՆԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՑԱԾՐ ՃՆՇՈՒՄԱՅԻՆ ՎԵՐԳԵՏՆՅԱ ԳԱԶԱՏԱՐ ԽՈՂՈՎԱԿԱՇԱՐԵՐԸ <<ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ>> ՓԲԸ-ԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Քաղաքացիական օրենսգրքի>> 685-րդ և 689-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Արենի համայնքի ավագանու 12.09.2023 թվականի թիվ 114-Ա որոշումը՝ ***որոշում եմ.***

1. Արենի համայնքի սեփականություն հանդիսացող Աղավնաձոր բնակավայրերի վարչական տարածքներում գտնվող, սույն որոշման թիվ 1 հավելվածում նշված ցածր ճնշումային վերգետնյա գազատար խողովակաշարերը, անհատույց օգտագործման իրավունքով, 20 տարի ժամկետով հատկացնել <<ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ>> ՓԲԸ-ին:

2. Օրենքով սահմանված կարգով <<ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ>> ՓԲԸ-ի հետ կնքել գույքի անհատույց օգտագործման պայմանագիր:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 233-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԽԱՉԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ 12 ՓՈՂՈՑ 1 ՓԱԿՈՒՂԻ 2/4 ԵՎ 12 ՓՈՂՈՑ 1 ՓԱԿՈՒՂԻ 2/5 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՊԱՀԵՍՏՆԵՐԸ ԱՆՀԱՏՈՒՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԽԱՉԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՈՐԾՈՂ «ՔԱՐԱԿՈՓ» ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎԻՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Քաղաքացիական օրենսգրքի>> 685-րդ և 689-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Արենի համայնքի ավագանու 10.07.2023 թվականի թիվ 82-Ա որոշումը՝ ***որոշում եմ.***

1. Արենի համայնքի սեփականություն հանդիսացող Խաչիկ բնակավայրի վարչական տարածքի 12 փողոց 1 փակուղի 2/5 հասցեում գտնվող, (կադաստրային ծածկագիր՝ 10-025-0130-0067-001) 184,7 քմ մակերեսով և 12 փողոց, 1 փակուղի 2/4 հասցեում գտնվող (կադաստրային ծածկագիր՝ 10-025-0130-0066-001) 92,3 քմ մակերեսով պահեստները անհատույց օգտագործման իրավունքով, 5 տարի ժամկետով տրամադրել Խաչիկ բնակավայրում գործող «Քարակոփ» գյուղատնտեսական կոոպերատիվին

2. Օրենքով սահմանված կարգով «Քարակոփ» գյուղատնտեսական կոոպերատիվի հետ կնքել գույքի անհատույց օգտագործման պայմանագիր:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**